

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձբաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2005թ. հունվար-փետրվարին, ըստ գնահատման, կազմել է 1194.3 հազ. մարդ, որի 91.0%-ը կամ 1087.2 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.0%-ը կամ 107.1 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2005թ. փետրվարի վերջի դրությամբ վերոհիշյալ գործակալությունում հաշվառման կանգնած 138.9 հազ. աշխատանք փնտրողներից 97.1%-ը կամ 134.9 հազ. մարդ եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 78.8%-ը կամ 106.3 հազ. մարդ: Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել 1.0 հազ.մարդ, նրանցից՝ կանայք՝ 57.7%:

2005թ. փետրվար ամսին վերոհիշյալ գործակալությունում գրանցված 2.3 հազ. չզբաղվածներից 1.9 հազարը կամ 82.6%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 2.3 հազ. չզբաղված աշխատանք փնտրողներ, նրանցից 0.6 հազարը կամ 26.1%-ը՝ աշխատանքի տեղավորման կապակցությամբ:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2005թ. փետրվարին¹

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		Նրանցից՝ չզբաղվածներ		Նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2004թ. փետրվարի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2004թ. փետրվարի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2004թ. փետրվարի նկատմամբ, %
ք.երևան	29.3	86.9	29.0	86.6	25.2	85.1
Արագածոտն	2.4	104.3	1.9	90.5	1.3	86.7
Արարատ	4.6	83.6	4.5	83.3	3.4	82.9
Արմավիր	7.5	89.3	7.2	85.7	4.5	81.8
Գեղարքունիք	7.9	91.9	7.4	88.1	4.9	83.1
Լոռի	26.5	96.0	26.2	95.6	20.9	95.0
Կոտայք	7.4	93.7	7.1	89.9	5.1	89.5
Շիրակ	31.0	100.0	30.2	97.7	24.0	94.9
Սյունիք	14.8	88.1	14.5	86.3	12.1	87.7
Վայոց ձոր	2.3	100.0	2.1	91.3	1.6	94.1
Տավուշ	5.2	98.1	4.8	96.0	3.3	91.7
Ընդամենը ՀՀ	138.9	93.0	134.9	91.1	106.3	89.6

Պաշտոնապես գրանցված գործազուրկներից 74.7 հազ. մարդ կամ 70.3%-ը կազմել են կանայք: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2004թ. փետրվարի նկատմամբ աճել է 1.4%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2005թ. փետրվարի վերջին կազմել է 1058 մարդ, այդ թվում՝ 63.4%-ը կամ 671-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն ըստ մասնագիտությունների 2005թ. փետրվարին¹

Մասնագիտությունների անվանումը	Ընդամենը	որից՝ ամսվա վերջի դրությամբ
Ազատ աշխատատեղեր	1306	1058
Ծառայողներ, ընդամենը	445	387
<i>Նրանցից՝</i>		
տնտեսագետ	6	3
ինժեներ	5	2
բժիշկ	183	181
մանկավարժ	107	96
իրավաբան	-	-
գյուղատնտես	-	-
այլ մասնագետներ	144	105
Բանվորներ, ընդամենը	861	671
<i>Նրանցից՝</i>		
խառատ	13	11
փականագործ	19	13
մեխանիկ	3	2
էլեկտրիկ	8	6
ատաղձագործ	2	1
վարորդ	41	35
եռակցող	26	25
կոշկագործ	-	-
կարող, մանող, գործող, ջուլիակ	272	239
բանվորական այլ մասնագիտություններ	311	221
մասնագիտություն չպահանջող աշխատատեղեր	166	118

Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան ըստ ամիսների¹, 2005թ.

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Զբաղվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով %		
		մարդ	նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ
Հունվար	956	142	63.7	67.0
Փետրվար	1058	127	89.4	53.4

Գործազրկության նպաստի միջին չափն ըստ ամիսների¹, 2005թ.

(ամսվա վերջի դրությամբ)

	Նպաստառու գործազուրկների թվաքանակը, հազ. մարդ	Գործազրկության նպաստի միջին չափը, դրամ
Հունվար	3.5	6363
Փետրվար	4.1	6438

Պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակն ըստ ամիսների¹

(ամսվա միջինը, գնահատական, %)

	2004թ.	2005թ.
Հունվար	9.8	9.0
Փետրվար	9.8	8.9

2005թ. փետրվարի վերջի դրությամբ պաշտոնապես գրանցված գործազուրկներից մասնագիտական ուսուցում են անցել 103 մարդ (նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը գերազանցելով 12.9 անգամ), նրանցից՝ 92.2%-ը՝ կանայք: Մասնագիտական ուսուցման կազմակերպման համար ծախսվել է 7226.2 հազ. դրամ:

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով: